





ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂՈՑ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐՈՑ


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բազ Բաժնետիրական Ընկերություն
 ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
 Հաշվետվություն թիվ 13, 16.03.10թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս, պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,072,401 հատ, 25,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ, 10,000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Գարիկ Ադամյան</u> (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	16.03.2010թ. (ամսաթիվ)
<u>Արթուր Մելիքյան</u>	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	 (ստորագրություն)	16.03.2010թ. (ամսաթիվ)
<u>Տիգրան Գալստյան</u> (անուն, ազգանուն)	Գլխավոր հաշվապահ- վարչության անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	16/03/2010թ. (ամսաթիվ)
Ստորագրությունները հավաստում են՝			
<u>Աշոտ Օսիպյան</u> (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	16/03/2010 (ամսաթիվ)





«16» մարտի 2010թ.

ՈՐՈՇՈՒՄ N 08

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ԽՈՐՀՐԴԻ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ հեռակա ընդհանուր ժողով հրավիրելու մասին

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21⁶-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի խորհուրդը որոշեց.

1. Հեռակա կարգով քվեարկության միջոցով գումարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:

2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2010 թվականի մարտի 16-ը:

3. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը (կցվում է):

4. Հաստատել ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացվող նոր թողարկվող բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները (կցվում է):



5. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը (կցվում է):

6. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին արտահերթ հեռակա ընդհանուր ժողով գումարելու մասին ծանուցման ձևը (կցվում է), բաժնետերերին ծանուցել և քվեաթերթիկները տրամադրել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:

7. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ հեռակա ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտել 2010 թվականի ապրիլի 19-ին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի մարտի 16-ից:

Խորհրդի նախագահ՝


 Բ. Բեգլարյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

*ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի
արտահերթ հեռակա ընդհանուր ժողովի*

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով թվով 120.000 (մեկ հարյուր քսան հազար) հատ լրացուցիչ հասարակ անվանական բաժնետոմսերի թողարկման մասին:

2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ թողարկվող հասարակ անվանական բաժնետոմսերն ամբողջությամբ, բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա (2010 թվականի մարտի 16-ի) դրությամբ, բանկի բաժնետերեր հանդիսացող անձանց միջև տեղաբաշխելու մասին:

3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ թողարկվող հասարակ անվանական բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմանների հաստատման մասին:

4. Տեղաբաշխման արդյունքների, ինչպես նաև փոփոխված կանոնադրության հաստատման նպատակով ընդհանուր ժողով հրավիրելու օր սահմանելու մասին:

Թողարկման և տեղաբաշխման պայմաններ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) թողարկում է թվով 120.000 (մեկ հարյուր քսան հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմս, դրանք տեղաբաշխելով բաժնետերերի միջև՝ 1 (մեկ) բաժնետոմսի տեղաբաշխման գինը սահմանելով 8,500 (ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Տեղաբաշխման ժամկետը սահմանվում է 21.05.2010 թվականից մինչև 27.05.2010թ.-ը:

Բաժնետերերի համար կիրառվում է նախապատվության իրավունք 20.04.2010թ-ց մինչև 20.05.2010թ.-ը:

Տեղաբաշխմանը մասնակցելու նպատակով բաժնետերերը պարտավոր են նախապատվության իրավունքի կիրառման ժամկետում Բանկի գլխամասային գրասենյակ ներկայացնել ծանուցում (ձևը կցվում է)՝ նախապես ՀՀ կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվին վճարելով իր կողմից ձեռքբերվող բաժնետոմսերի արժեքը:

ՀՀ կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվի վերաբերյալ տեղեկատվությանը բաժնետերերը կարող են ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ «www.araratbank.am/Ներդրումային առաջարկներ» հասցեում, ինչպես նաև գլխամասային գրասենյակում և բոլոր մասնաճյուղերում:

Թողարկված բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են համամասնության սկզբունքով: Եթե որևէ բաժնետիրոջ բաժնեմասը չի բավարարում մեկ ամբողջական բաժնետոմս ձեռքբերելու համար, ապա այդ բաժնետերը կարող է միավորվել նման այլ բաժնետերերի հետ՝ ամբողջական մեկ բաժնետոմս ձեռքբերելու նպատակով՝ համապատասխան նշում կատարելով ծանուցման մեջ: Եթե համամասնության սկզբունքի կիրառման արդյունքում մեկ բաժնետիրոջը հասանելի բաժնետոմսերի թիվը կազմում է կոտորակային թիվ, ապա կատարվում է կլորացում հետևյալ սկզբունքով մինչև 4 տասնորդականը կլորացվում է դեպի ցածր ամբողջական թիվ, իսկ 5 տասնորդականից սկսած՝ դեպի բարձր ամբողջական թիվ:

Նախապատվության իրավունքի կիրառման ժամկետում ներկայացված ծանուցումների հիման վրա տեղաբաշխման ժամկետի ընթացքում բաժնետոմսերը բաժնետերերի միջև բաշխելուց հետո, որը կատարվում է մինչև 25.05.2010թ.-ը

ներառյալ, չտեղաբաշխված բաժնետոմսերը բաշխվում են լրացուցիչ բաժնետոմսերի ձեռքբերման ցանկություն հայտնած բաժնետերերի միջև՝ իրենց ունեցած բաժնետոմսերին համամասնորեն:

Բաժնետերերի միջև լրացուցիչ բաժնետոմսերը տեղաբաշխելու մասին լրացուցիչ բաժնետոմսեր ձեռք բերելու ցանկություն հայտնած բաժնետերերը կտեղեկացվեն 25.05.2010թ.-ից մինչև 26.05.2010թ.-ը ներառյալ՝ ըստ ծանուցման մեջ նշված հեռախոսահամարների, իսկ նրանց կողմից վճարումը ՀՀ կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվին պետք է կատարվի մինչև 27.05.2010թ.-ի ժամը 16⁰⁰-ն:

Տեղաբաշխումը կհամարվի կայացած թողարկված բոլոր բաժնետոմսերի 80%-ը տեղաբաշխված լինելու դեպքում:

Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետի ընթացքում բաժնետոմսերի դիմաց վճարված գումարները ենթակա են վերադարձման միայն տեղաբաշխումը չկայացած համարվելու դեպքում:

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

Սույնով

_____ (բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը /ֆիզիկական անձի համար՝ անունը/, պետական գրանցման համարը)

_____ տվյալները /անձնագրային տվյալները/, գտնվելու /բնակության/ վայրը)

հայտնում է, որ օգտվում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից 19.04.2010թ. արտահերթ (հեռակա) ընդհանուր ժողովի որոշմամբ թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերը ձեռք բերելու իր նախապատվության իրավունքից և ձեռք է բերում թվով _____ հատ բաժնետոմս:

Կից ներկայացվում է ձեռք բերվող բաժնետոմսերի դիմաց վճարումը հավաստող փաստաթուղթը:


Հայտնում են նաև, որ բացի համամասնության սկզբունքով ձեռք բերվող բաժնետոմսերից, ցանկանում են լրացուցիչ ձեռք բերել թվով _____ բաժնետոմս, որի ձեռք բերման հնարավորության մասին խնդրում են տեղեկացնել _____ հեռախոսահամարով, պատրաստ են վճարումը կատարել մինչև 27.05.2010 թվականի ժամը 16⁰⁰-ն:

Մեկ ամբողջական բաժնետոմս ձեռք բերելու նպատակով ձևավորվել է խումբ բաժնետերերի հետևյալ կազմով՝

- _____ ,
- _____ ,
- _____ ,
- _____ ,
- _____ ,
- _____ ,
- _____ ,
- _____ ,

որոնց շահերը ևս լիազորված են ներկայացնել:

_____ (ստորագրություն, ամիս, ամսաթիվ)



ՔՎԵԱԹԵՐԹԻԿ						
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ հեռակա ընդհանուր ժողովի Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Պուշկինի 19 19.04.2010թ.						
Օրակարգի հարց	Լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու, լրացուցիչ բաժնետոմսերը տեղաբաշխելու և դրանց դիմաց վճարման մասին					
N:1,N:2, N3, N 4						
Օրակարգի հարցերը	քվեարկության տարբերակները					
1. Լրացուցիչ թողարկել թվով 120,000 հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի , 5,000 ՀՀ դրամ անվանական աժեքով, հասարակ անվանական բաժնետոմս	կողմ	<input type="text"/>	դեմ	<input type="text"/>	ձեռնպահ	<input type="text"/>
2. Լրացուցիչ թողարկվող թվով 120,000 հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի , 5,000 ՀՀ դրամ անվանական աժեքով, հասարակ անվանական բաժնետոմսերը փակ տեղաբաշխմամբ 1 բաժնետոմսը` 8,500 ՀՀ դրամ շուկայական արժեքով` տեղաբաշխել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի միջև:	կողմ	<input type="text"/>	դեմ	<input type="text"/>	ձեռնպահ	<input type="text"/>
3. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ թողարկվող հասարակ անվանական բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմանները, որոնք բերված են սույն քվեաթերթիկի հակառակ կողմում:	կողմ	<input type="text"/>	դեմ	<input type="text"/>	ձեռնպահ	<input type="text"/>
4. Տեղաբաշխման արդյունքների, ինչպես նաև փոփոխված կանոնադրության հաստատման նպատակով ընդհանուր ժողով հրավիրել 2010 թվականի մայիսի 31-ին:	կողմ	<input type="text"/>	դեմ	<input type="text"/>	ձեռնպահ	<input type="text"/>
բաժնետիրոջ /նրա ներկայացուցչի/ բաժնետոմսերի (ծայների) քանակը	բաժնետիրոջ /նրա ներկայացուցչի/ ազգանունը և անունը					
<input type="text"/>						
ստորագրությունը						
Ծանոթություն. Հարգելի բաժնետեր, Ձեր ընտրության տարբերակի վանդակում նշագրեք «X», իսկ մյուս վանդակները թողեք դատարկ: Եթե բոլոր վանդակները թողնվեն դատարկ կամ «X» նշանը լրացվի մեկից ավել վանդակներում, ապա քվեարկությունը այս քվեաթերթիկով կհամարվի անվավեր: Հիշեցվում է նաև, որ քվեաթերթիկը պետք ստորագրվի քվեարկողի կողմից:						

ԾԱՆՈՒՑՈՒՄ

*ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ հեռակա
ընդհանուր ժողովի մասին*

Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Պուշկինի 19) հեռակա քվեարկության միջոցով անցկացնում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:

Սույնով հայտնում ենք, որ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2010 թվականի մարտի 16-ին:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը և լրացուցիչ թողարկվող հասարակ անվանական բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմանները կցվում են սույն ծանուցմանը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ հեռակա ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտվում է 2010 թվականի ապրիլի 19-ին ժամը 18⁰⁰-ին:

Հայտնում ենք, որ ժողովում ընդգրկված հարցերին դեմ քվեարկելու կամ քվեարկությանը չմասնակցելու դեպքում, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի համաձայն, Դուք իրավունք ունեք պահանջել Ձեզ պատկանող բաժնետոմսերի հետգնում: Այսինքն, եթե Ընկերության 31 մայիսի 2010թ. բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում ընդունի Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների կատարման մասին՝ կապված կանոնադրական կապիտալի ավելացման հետ և Դուք կամ ժողովին մասնակցելու համար Ձեր կողմից լիազորված անձը դեմ քվեարկի կամ քվեարկությանը չմասնակցի, ապա կարող եք 2010թ.-ի հունիսի 1-ից մինչև 2010թ.-ի հուլիսի 16-ը Ընկերության հասցեով (ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19) ուղղել գրավոր դիմում, պահանջելով հետ գնել Ձեզ պատկանող բաժնետոմսերը՝ ամբողջությամբ կամ մասամբ, նշելով հետգնման ենթակա բաժնետոմսերի քանակն ու Ձեր հասցեն: Հետգնման պահանջի առկայության դեպքում, Ընկերությունը ս.թ. հուլիսի 19-ից մինչև ս.թ. օգոստոսի 19-ը ներառյալ կիրավիրի անկախ գնահատող՝ բաժնետոմսերի հետգնման գինը որոշելու համար և կկազմակերպի հետգնման պահանջ ներկայացրած բաժնետերերից բաժնետոմսերի գնումը:

Բաժնետոմսերի հնարավոր հետգնմանն ուղղվող միջոցների գումարը չի կարող գերազանցել կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով նոր բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշման կայացման պահին Ընկերության գուտակտիվների (սեփական կապիտալի) 10%-ը: Եթե հետգնման ենթակա բաժնետոմսերի գումարային արժեքը գերազանցի այդ մեծությունը, ապա բաժնետոմսերը հետ կգնվեն այդ մեծության չափով՝ բաժնետերերի դիմումներում նշված բաժնետոմսերի քանակներին համամասնորեն:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում նաև ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչության նախագահ

Աշոտ Օսիպյան